



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ Տ. ԽՈՐԵՆ Ա. ՔՅՆՅ. ՀԱՊԵՇԵԱՆ ԿԸ ՆՇԱՆԱԿՈՒԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՅ ՀՈԳԵՒՐ ՀՈՎԻՒ



Այսու կը հաղորդենք մեր հաւատացեալ ժողովուրդին, որ տնօրինութեամբ թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, եւ Կրօնական ժողովին ու Ազգային Վարչութեան որոշումով, ու համախորհուրդ՝ Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ

հոգաբարձութեան, Արժ. Տ. Խորեն Ա. Քնյ. Հապէշեանը նշանակուած է եկեղեցւոյ Հոգւոր Հովիւ:

Արժանապատիւ Տէր Հայրը կը յաջորդէ Հոգ. Տ. Վաղինակ Վրդ. Մելոյեանի: Ան տասնամեակներ շարունակ ծառայած է Արեւելեան Թեմին մէջ, գլխաւորաբար Ուաշինկթընի Ս. Խաչ եկեղեցւոյ ծխական շրջանի իբրեւ հոգեւոր հովիւ, իսկ վերջին տարիներուն հաստատուած է մեր Թեմը ու կը շարունակէ իր հոգեւոր ծառայութիւնները: Վերջին քանի մը ամիսներուն, Տէր Հայրը արդէն հոգեւոր մատակարարութիւն կը տրամադրէր Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ծխական համայնքին:

Յաջողութիւն կը մաղթենք Տէր Հօր եւ եկեղեցւոյ հոգաբարձութեան, մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին ծառայութեան դաշտերուն մէջ:

ARCHPRIEST FR. KHOREN HABESHIAN APPOINTED PASTOR OF ST. GREGORY CHURCH OF SAN FRANCISCO

We hereby announce that by the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, the joint decision of the Religious and Executive Councils, and in accord with the Board of Trustees of St. Gregory

Church of San Francisco, Archpriest Fr. Khoren Habeshian has been appointed to serve as pastor. He succeeds previous pastor Very Rev. Fr. Vaghinag Meloian.

Fr. Khoren has served for decades as a pastor within the Eastern Prelacy, specifically at Holy Cross Church in Washington D.C., and in recent years relocated to the west coast where he has served within the Western Prelacy. For the past few months, Fr. Khoren had been frequently serving the St. Gregory parish community.

We wish Fr. Khoren and the Board of Trustees success in their service to St. Gregory Church.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ Կ'ԱՅՅԵԼԷ ՖՐԵՉՆՈՅԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԾԽԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ

Կիրակի, 30 Յունուարին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Սուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի այցելէ Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցւոյ ծխական համայնքին, պիտի հանդիսապետէ Սուրբ Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Ս. Վահան Զինյ. Կոստանեան:

Առաջնորդ Սրբազանը հանդիպում մը պիտի ունենայ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի աշակերտներուն եւ պատասխանատուներուն հետ:

Կիրակնօրեայի տնօրէնութիւնն ու ուսուցչական կազմը պատրաստած են իրենց տարեկան գործունեութեան ծրագիրը, որ պիտի ներկայացուի Առաջնորդ Սրբազան Հօր:

Եկեղեցական արարողութենէն անմիջապէս վերջ, եկեղեցւոյ սրահին մէջ տեղի պիտի ունենայ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ 110-րդ տարեդարձին նուիրուած ճաշկերոյթը: Պիտի իրագործուի կոկիկ յայտագիր մը: Այս առիթով Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի փոխանցէ իր օրհնութեան խօսքը: Ձեռնարկին ներկայ պիտի ըլլան Ազգային Վարչութեան անդամ Պիլ Սաաթեան եւ Ժողովականութեան անդամներ:

PRELATE TO VISIT PARISH COMMUNITY OF HOLY TRINITY CHURCH OF FRESNO

On Sunday, January 30th, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and deliver the sermon at Holy Trinity Church in Fresno on the occasion of the 110th anniversary of the church. Parish Pastor Rev. Fr. Vahan Gosdanian will assist at the altar.

In the morning, the Prelate will visit the Sunday School where he will meet the students and the administration, with whom he will examine the coming year's activities and curriculum.

Immediately following the Divine Liturgy, the Prelate will preside over the 110th anniversary banquet and will deliver his message.

Executive Council member Mr. Bill Sahatdjian will also be in attendance.

«ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻ ՏԱՐՈՒՄԱՆ» ԱՌԻԹՈՎ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՏԻԿՆԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Ազգային Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը, ընդառաջելով Վեհափառ Հայրապետին կոչին, որ 2011 տարին հռչակած է Հայ Մանուկի տարի, իր առաջին ձեռնարկը կազմակերպած է Հինգշաբթի, 10 Փետրուարի կեսօրին, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ:

Ճաշկերոյթ-դասախօսութիւն ձեռնարկին բանախօսներն են Վահան եւ Անուշ Շամլեան Ազգային Վարժարանի տնօրէն Տիար Վազգէն Մատենլեան ու փոխ տնօրէնուհի Տիկն Ռիթա Գաբրիէլեան, նիւթ ունենալով «Հայ Մանուկը Ամերիկահայ Միջավայրին մէջ»:

Մուտքի նուէրն է \$20 տոլար: Յաւելեալ տեղեկութեանց համար հեռաձայնել Ազգային Առաջնորդարան:

"YEAR OF THE ARMENIAN CHILD" KICK-OFF EVENT

On Thursday, February 10th, 2011, the kick-off event in celebration of the "Year of the Armenian Child" will be held at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall.

The event is a literary luncheon organized by the Prelacy Ladies Auxiliary. The keynote speakers are Mr. Vazken Madenlian and Mrs. Rita Kaprielian, Principal and Vice-Principal respectively of Chamlian Armenian School. The topic is "The Armenian Child within the American Community".

The luncheon begins at noon and donation is \$20. Please contact the Prelacy to reserve seats and for further information.

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՍՓԻՌՔԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հայաստանի Գլխաւոր Հիւպատոս Տիար Գրիգոր Յովհաննիսեանի նախաձեռնութեամբ, բարի գալուստի ընդունելութիւն մը կազմակերպուած է Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանի Լոս Անճելըս այցելութեան

առիթով, որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 30 Յունուարին, երեկոյեան ժամը 5-ին, «Արպաթ» ճաշարանին մէջ, Պըրպէնք:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Զոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան ներկայ պիտի ըլլան ձեռնարկին: Ներկայ պիտի ըլլան նաեւ Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներ:

WELCOMING RECEPTION FOR MINISTER OF DIASPORA AFFAIRS HRANUSH HAKOBYAN

On Sunday, January 30th, a welcoming reception for Armenia's Minister of Diaspora Affairs Her Excellency Hranush Hakobyan will take place at Arbat restaurant in Burbank. The reception is organized by the Consulate General of Armenia, under the auspices of Consul General the Honorable Grigor Hovhannissian.

Very Rev. Fr. Barthev Gulumian will represent the Prelate. Executive Council members will also be in attendance.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ՏՈՒՄ ԶԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԶԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏԻՆ



Ուրբաթ, 28 Յունուարի առաւօտուն, Առաջնորդ Սրբազան Զայրը այցելութիւն մը տուաւ Զայ Կաթողիկէ Զամայնքին ժողովրդապետարանը, Կլենտէյլի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, եւ ցաւակցութիւն յայտնեց Զայ Կաթողիկէ համայնքի ժողովրդապետ Զոգշ. Տ. Գրիգոր Վրդ. Շահինեանին, Զայ Կաթողիկէ համայնքի

նախկին Զոգելոր Տիրոջ՝ Ամենապատիւ Տ. Յովհաննէս Պետրոս ԺԸ. Գասպարեան պատրիարքի վախճանման առիթով: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանային Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Զոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

Զանդիպումի սկզբնաւորութեան, եկեղեցւոյ մէջ »Զոգւոց« աղօթք մատուցուեցաւ վախճանեալ Զոգելոր Տիրոջ հոգիին համար: Առաջնորդ Սրբազանը նաեւ ցաւակցական արձանագրութիւն մը թողուց այս առիթով բացուած յատուկ տոմարին մէջ:

Առաջնորդ Սրբազանը նախապես ցաւակցական գիր մը յղած էր համայնքի ժողովրդապետ Յայր Գրիգորին, վեր առնելով երջանկայիշատակ Յոզեփը Տեսուչին եկեղեցաշէն եւ ժողովրդանուէր գործունէութիւնը:

Առաջնորդ Սրբազանը նշած էր, որ ան տասնամեակներ շարունակ կեանք նուիրաբերած է Յայ Կաթողիկէ եկեղեցւոյ ծառայութեան ճամբով: Ան հայութեան ջահն ու իրաւունքներուն դրօշը բարձր պահած է իր ծառայութեան եւ առաջնորդութեան բոլոր տարիներուն, եւ յիշատակելի վաստակ կերտած է Յայ Կաթողիկէ համայնքի թէ մեր ժողովուրդի հաւաքական կեանքին մէջ:

PRELATE EXPRESSES CONDOLENCES ON THE PASSING OF ARMENIAN CATHOLIC PATRIARCH HOVHANNES BEDROS XVIII KASPARIAN



Gulumian accompanied the Prelate.

On the morning of Friday, January 28th, the Prelate visited St. Gregory Armenian Catholic Church to meet with the Rector Very Rev. Fr. Krikor Shahinian and express condolences on the passing of former Armenian Catholic Patriarch of Cilicia Hovhannes Bedros XVIII Kasparian.

Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev
